Հայտարարություն

Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր

No: 5398-AM

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի «**Սոցիալական Պաշտպանության Վարչարարության երկրորդ ծրագիր»** վարկային ծրագրի շրջանակում **«Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման աջակցության խորհրդատվական ծառայությունների»** առաջադրանքը իրականացնելու նպատակով հայտարարվում է Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Այս առաջադրանքի նպատակն է անհատ իրավաբան-խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու) վարձելու միջոցով աջակցել (Պատվիրատուին) ԻՄԾ համակարգի ներդրման հարցում վերջինիս համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման, ինչպես նաև ԱՍՀՆ-ի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից մշակված նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ/առաջարկներ տրամադրելու միջոցով:

Ընտրված Խորհրդատուն պետք է կատարի հետևյալ աշխատանքները՝

1. մշակի իրեն տրամադրվող ՏՀ-ում նշված իրավական ակտերի նախագծերը,
2. մասնագիտական առաջարկներ (այդ թվում՝ մասնագիտական կարծիք, դիտողություններ) ներկայացնի իրեն տրամադրվող ՏՀ-ում նշված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ,
3. իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերին, ինչպես նաև Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական եզրակացություններին ծանոթացնելու նպատակով ԱՍՀՆ-ի՝ ԻՄԾ համակարգի ներդրման համար պատասխանատու անձանց համար երկու անգամ կազմակերպի սեմինար, որի արդյունքում ունկնդիրների կողմից արված դիտողությունների ու առաջարկների հիման վրա լրամշակի ՏՀ-ում նշված իրավական ակտերի աշխատանքային նախագծերն ու ներկայացնի Պատվիրատուին:

Խորհրդատուն աշխատանքները պետք է իրականացնի պայմանագրի ստորագրումից հետո 120 օրվա ընթացքում:

Խորհրդատուն պետք է ունենա՝

1. բարձրագույն իրավաբանական կրթություն,
2. մասնագիտական աշխատանքի առնվազն 7 տարվա փորձ,
3. իրավախորհրդատվության և իրավական ակտերի նախագծերի մշակման առնվազն հինգ տարվա փորձ (սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրական կարգավորման ուղղությամբ իրականացված աշխատանքների փորձը կդիտվի առավելություն),

4. քաջատեղյակ լինի սոցիալական պաշտպանության ոլորտում գործառնող հաստատությունների սոցիալական գործառնությունների առանձնահատկություններին, ինչպես նաև սոցիալական ոլորտում գործող տեղեկատվական համակարգերին և տեղեկատվության փոխանակման քաղաքականությանը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատուն կարող է մինչեւ **սույն թվականի հունիսի 18-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տիգրան Մեծի փողոց 4
Հեռախոս. (374 11) 910581
Էլ. փոստ. info@ffpmc.am